

Հաստատում եմ՝



ԵՊՀ գիտական հարցերի
գծով պրոռեկտոր

Ռ. Բարխուդարյան

2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աննա Գազիկի Եղյանի «Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /Անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

2025թ.ապրիլի 17-ին ԵՊՀ անգլիական բանասիրության և Մանկավարժության ամբիոնների համատեղ նիստում քննարկվել է Աննա Գազիկի Եղյանի «Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը (արձանագրություն թիվ 9):

Նիստին և կարծիքի քննարկմանը մասնակցում էին բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գասպարյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Կնյազյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Մուրադյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ա.Զուբարյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ն.Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Հայրապետյանը, մ.գ.թ., դոցենտ Մ.Ավետիսյան, մ.գ.թ., դոցենտ Ա.Աշիկյանը և ուրիշներ:

Ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումները՝ պայմանավորված համաշխարհային շուկայում անընդհատ փոփոխվող պահանջներով, էլ ավելի

հրատապ են դարձնում ոչ միայն անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման միջոցի, այլև անգլերենի տարբեր ենթալեզուների, ինչպես օրինակ, ճարտարապետական ենթալեզվի բառապաշարի ուսուցման հիմնախնդիրը: ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մի շարք հիմնախնդիրներ դուրս են մնացել մանրամասն ուսումնասիրությունների դաշտից, որոնցից մեկն էլ, ինչպես նշում է աստենախոս Աննա Եղյանը, իր ուսումնասիրության հիմնահարցն է Աշխարհի տարբեր երկրներում սովորելու, լավագույն փորձը մեզանում ներդնելու գործընթացը պայմանավորում են մի շարք հանգամանքներ, որոնցից մեկն էլ լեզվական խնդիրներից սովորողի բառապաշարանային հարստացումն է տարբեր մեթոդներով:

Ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ տեխնիկական բուհում օտար լեզուների ուսուցումը շարունակական բարելավման անհրաժեշտություն ունի: Հայախոս ուսանողները՝ լավ տիրապետելով ռուսերենին, տարիներ շարունակ օգտվել են ռուսալեզու գրականությունից և ունեցած գիտելիքները հաջողությամբ կիրառել աշխատանքային գործունեության ընթացքում:

Աշխարհաքաղաքական նորանոր զարգացումներին համընթաց աստիճանաբար փորձ է արվում ՀՀ-ում ճարտարապետական ուղղվածության բազում ֆակուլտետներում նախկինում կիրառվող ռուսալեզու կամ Ռուսաստանի Դաշնությունում լույս տեսած ճարտարապետական անգլերենի ուսուցման բուհական դասագրքերը փոխարինել անգլերեն նոր դասագրքերով, որոնք ապագա ճարտարապետին հնարավորություն կտան տիրապետել ոչ միայն առօրյա խոսակցական, այլև մասնագիտական ենթալեզվի բառապաշարին: Ապագա ճարտարապետը պետք է ընթերցի մասնագիտական գրականություն, օգտվի համապատասխան համացանցային կայքերից իր մասնագիտական կարողությունները շարունակաբար զարգացնելու նպատակով, իսկ դրա համար նրան անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝ տիրապետել ճարտարապետական բառապաշարի անգլերեն տարբերակին, անգլերենով ընթերցել մասնագիտական տեքստեր, հասկանալ ու

թարգմանել դրանք, հաղթահարել տեքստում առկա քերականական դժվարությունները:

Հիմնախնդրի մասին տեսադաշտում ոչ բավարար գրականության առկայությունը ևս թույլ է տալիս կարծելու, որ մեզանում այս ատենախոսության բարձրացրած հիմնախնդիրը արդիական հնչեղություն ունի և կարիք կա մեթոդաբանական մակարդակով լուծել այդ խնդիրը: «Անգլերեն ճարտարագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով ատենախոսությունը նվիրված է այս հիմնախնդրին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, հավելվածից:

Ներածության մեջ ատենախոսը հանգամանորեն հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության նախնական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները: Համոզիչ է ներկայացված հետազոտության նորույթը: Արդիականությունը բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ-ում ճարտարապետական ուղղվածության տարբեր ֆակուլտետներում անգլերենի դասավանդման գործընթացը կազմակերպելիս կարիք կա նոր մեթոդական մոտեցումների, քանի որ, ինչպես փաստում է ատենախոս Աննա Եղյանը՝ «անընդհատ մեծանում է հետաքրքրությունը ճարտարապետական լեզվի ուսուցման նկատմամբ»:

Հետազոտության գիտական նորույթը բացատրվում է անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման պայմանների ընթացակարգերի, ռազմավարությունների ուսումնասիրությամբ, ինչպես նաև, ատենախոսության շրջանակներում մշակվել է ճարտարապետական հասկացութային ոլորտում շրջանառվող բնագրերի տեքստերի ընտրության և դրանցում առկա անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգ,

հիմնավորվել են ճարտարապետական հասկացությունները, մշակվել են ուսուցման առաջարկվող մեթոդի փորձարարական ռազմավարություններ:

Հետազոտության մեջ հստակ է շարադրված վարկածը: Տեսական և գործնական նշանակության վերլուծության մեջ երևում են ծավալուն աշխատանքի տեսագործական հիմնավորումները և կիրառական նշանակությունը: Վերլուծված են հետազոտության իրականացման հիմնական փուլերը, որոնք փաստում են, որ իրականացվել է ծավալուն և օգտակար աշխատանք: Ատենախոսի կողմից պաշտպանության են ներկայացվել վեց դրույթներ, որոնք ամփոփում են իրենց մեջ ճարտարապետական ենթալեզվի իմաստային դաշտի ուսումնասիրումը, ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական նոր մոտեցումների ուսումնասիրում ու ներդրման հնարավորությունները, խոսության վերլուծությունն ու անգլերեն ճարտարապետական տեքստերի և բառապաշարի ընտրությունն իրականացնելու մոտեցմանը՝ համաձայն ճարտարապետական երեք շրջանի:

Ատենախոսությունը կազմված է 149 էջից: Առկա են գծապատկերներ, նկարներ, տրամագրեր:

Ատենախոսության առաջին՝ «Ճարտարապետական տեքստերի ընտրության եվ ուսուցման հիմնախնդիրը տեխնիկական բուհում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում ատենախոսը ներկայացնում է «Մասնագիտական կողմնորոշման տեքստերի ընտրության և ուսուցման սկզբունքները տեխնիկական բուհում», որտեղ դիտարկում է տեխնիկական բուհում ճարտարապետական տեքստերի ընտրության և ուսուցման խնդիրները, տեքստերի տեսակներն ու ընտրության սկզբունքները՝ հաշվի առնելով ուսանողների կարիքները և դասընթացի նպատակները:

Ճարտարապետական տեքստերի ուսումնասիրությունը կատարվել է գիտական, առօրյա-խոսակցական և գործարարական-պաշտոնական ոճերի համադրությամբ: Հեղինակը մասնավորապես անդրադառնում է Խոլոդովայի տեսությանը, ըստ որի

ճարտարապետությունն անցել է երեք շրջան՝ արվեստ-արհեստ, արվեստ-տեխնիկա և գիտատեխնիկական շրջան: Բառապաշարի ընտրության առումով Ատենախոսը հաշվի է առնում նաև ճարտարապետական տեքստերի բազմազանության փաստը:

Աննա Եղյանը մանրամասնորեն լուսաբանում է "կրեոլային տեքստ" հասկացությունը, որը միավորում է խոսքային և պատկերային տարրերը: Ատենախոսը կարևորում է ճարտարապետական գերտեքստի դերը, քանի որ դրա միջոցով հնարավոր է դառնում բազմաքանակ տեքստերի յուրացումը ոչ գծային ձևով: Ճարտարապետական հասկացությո՞ւնը դիտարկվում է որպես մասնագիտական բառապաշարի ուսուցման հիմնական միավոր, մասնավորապես երբ խնդիր է դրվում բացահայտել ճարտարապետական տեքստերի ազգամշակութային յուրահատկությունները:

Երկրորդ՝ «ճարտարապետական կողմնորոշման բառապաշարի ընտրության եվ ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում» ենթագլուխը ներկայացնում է ճարտարապետական անգլերեն ենթալեզվի բառապաշարի առանձնահատկությունները: Ճարտարապետական տերմինաբանությունն ուսումնասիրվում է համագիտական, միջգիտական և նեղ մասնագիտական մակարդակներում: Ատենախոսը նշում է, որ ճարտարապետական տերմինաբանությանը բնորոշ են բարդությունը, հոմանիշությունը և փոխառությունների առկայությունը:

Բառապաշարի թեմատիկ խմբերի դասակարգումն իրականացվում է ըստ ճարտարապետական կառույցների /Արտեմիդի տաճար, Պարթենոն/, գործիչների /ճարտարապետ, շինարար/ և տեխնիկաների, շինանյութերի անվանումները: Հեղինակն անդրադառնում է եզրույթների ծագումնաբանական վերլուծությանը (օրինակ՝ Միրոնովայի հետազոտությունը door-ի տարատեսակների վերաբերյալ) և մանրակրկիտ բացահայտում է դրանց զարգացման և կիրառման առանձնահատկությունները: Ճարտարապետական անգլերեն ենթալեզվի

բառապաշարի ընտրության սկզբունքներն ընտրելիս ատենախոսն առաջարկում է հաշվի առնել նաև ճարտարապետական ոլորտի սպասարկման խոսքային կադապարները ներառող գերհասկացությունները/կոնցեպտները ("տուն", "բնակարան", կացարան և այլն):

Երրորդ՝ «ճարտարապետական անհամարժեք բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացվում են անհամարժեք բառապաշարի սահմանումները և առաջարկվում է դրա ուսուցման կոնցեպտուալ մոտեցման կիրառումը: Այս մոտեցումը թույլ է տալիս բացահայտել տերմինների իմաստային և զուգորդական դաշտերը և՛ տարժամանակյա և՛ համաժամանակյա կտրվածքներով: Հաստատվում է թեմատիկ մեթոդի արդյունավետությունը հասկացությունների և հասկացությունների ուսուցման առումով:

Գլուխ երկրորդը, որը վերնագրված է «Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում», բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում քննվում և վերլուծվում են այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման, տեքստերի ընթերցման ռազմավարությունները, անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման կադապարի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը: Նա իրավացիորեն նկատում է, որ օտարալեզու բառապաշարի ուսուցման ռազմավարությունների հիմքում պետք է դրվեն ուսանողների լեզվաբանական, հաղորդակցական, ինքնուրույն աշխատանքի կազմակերպման կարողությունների և հմտությունների զարգացումը: Նա անդրադառնում է Ա. Սիգեմինայի առաջարկած բառապաշարի ուսուցման յոթ ռազմավարական քայլերին՝ կանգ առնելով գրաֆիկական դասակարգիչների ռազմավարությանը, վերլուծում է Ռ. Մոլոսնի առաջ քաշած իմաստային կադապարների տիպերը, անդրադառնում է հատուկ կազմված մատրիցաների կիրառմանը՝ գիտելիքները համակարգելու, ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները դուրս բերելու համար, վերլուծում է հասկացությունների

քարտեզ հնարը որպես հիմնական գաղափարի շուրջ լրացուցիչ ինֆորմացիա հավաքելու լավ միջոց: Մեթոդական տեսանկյունից հատկապես կարևորված են հասկացության քարտեզագրումը, Ֆրայերի մոդելը, իմաստային քարտեզագրումը, իմաստային հատկանիշների վերլուծությունը, որոնց մանրամասն վերլուծությունները հարստացնում են աշխատանքը մեթոդական մոտեցումների տեսանկյունից: Հետաքրքրական և բազմակողմանի վերլուծություններ են արված ընթերցման ռազմավարությունների մասին երկրորդ զլխի առաջին ենթամասում, որտեղ քննվել են մեթոդիստներ Ֆոլսի, Մայերի, Գրեյվսի և Վաթս Թաֆենի, Շտալի մոտեցումները, որոնք լրացնում են մեկը մյուսին՝ հիմնավորելով և հարստացնելով միտքը, թե բառապաշարի ուսուցման գործընթացին պետք է ցուցաբերվի համալիր և համակողմանի մոտեցում:

Անդրադառնալով ճարտարապետական տեքստերի ընթերցման ռազմավարությանը՝ ատենախոսը կարևորել է թե՛ մասնագիտական գրականության ընթերցանության, թե՛ հասկանալու, և թե՛ թարգմանելու խնդիրը, քանի որ ճարտարապետական մասնագիտական տեքստերը հիմնականում բարդ են: «Ընթերցանությունը միայն բառեր արտասանել չի ենթադրում, - գրում է ատենախոսը, - այն պահանջում է հասկանալ»: Հետևաբար տեքստի իմաստը հասկանալու համար նա առաջարկում է մի քանի ռազմավարություններ՝ կանխատեսումներ անել, պատկերացնել կամ առարկայացնել, հարցեր տալ և պատասխանել հարցերին, վերապատմել և ամփոփել, կապել տեքստը կյանքին, բառագրոհ ռազմավարություն կիրառել: Կարևոր է հաշվի առնել սովորողի նախնական գիտելիքը և օգտագործել այն՝ զարգացնելով սովորողի բառապաշարը: Իր հետազոտության ընթացքում ատենախոսի աչքից չի վրիպել կարևոր մի հանգամանք՝ ընթերցողի ընթերցանության ոճը, որը երբեմն կարիք կա փոխելու առավել արդյունավետ ռազմավարության առաջարկմամբ՝ բարելավելով ռեֆլեքսիայի մակարդակը: Նա վերլուծում է ժամանակակից մի շարք մեթոդներ և ռազմավարություններ օրինակներ ներկայացնելով: Դրանցից են մտազրոհի ստուգում, հղման շրջանակ, մտահանգող

ընթերցանություն, գուգահեռ խոսակցության ռազմավարություն, համագործակցային ծանուցում, դժվար հարցադրման ռազմավարություն, ինտերակտիվ տետր և այլ ժամանակակից մոտեցումներ՝ բացահայտելով, թե որքան ռեսուրսային է ընթերցանության միջոցով սովորողի ճարտարապետական բառապաշարի հարստացման գործընթացը: Արժեքավոր է հատկապես երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում արված տարբեր մեթոդական մոտեցումների վերլուծությունները, որոնք մեկտեղված են և ներկայացված որպես ընթերցողական հմտությունների զարգացման շտեմարան: Հատկապես ուշարժան է ատենախոսի կողմից բազմաթիվ վերլուծությունների արդյունքում դուրս բերած անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման օրինակելի կադապարը, որի կարևոր բաղադրիչ են օտարալեզու բառապաշարի ուսուցման, տեքստերի ընթերցանության ռազմավարությունները: Այս կադապարի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը տալու համար ատենախոսը հնարավոր է համարում կադապարել խնդրո առարկա դասընթացը, որի ստուգման համար իրականացվել է եռափուլ փորձարարական ուսուցում: Հաշվի են առնվել ուսանողների նախնական գիտելիքները, կազմվել է ութ դասանյութ, որոնք հիմնվել են գործող դասագրքերի վրա: Դրանց վերջում առկա են թարգմանական բնույթի առաջադրանքներ: Աշխատանքում հանգամանորեն վերլուծված են բոլոր վարժությունները, որոնք տեղ են գտել կազմված կադապարում, մանրամասն ներկայացված է նաև ուսուցման կազմակերպման գործընթացը, խմբային, համագործակցային մոտեցումները, գնահատման ռազմավարությունները՝ սովորողների լեզվական կարողությունների ստուգման չափանիշներ մշակելով: Փորձարարական խմբի քառասունհինգ ուսանողի մոտ նկատելի է եղել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը հաստատող առաջադիմությունը, ինչը փաստում են էջ 129-ի աղյուսակները, էջ 130-ի տրամագիրը: Փորձարարական փուլի արդյունքները արձանագրող փուլում գերազանցում են հաստատող փուլի արդյունքները չորս տոկոսով, իսկ փորձարարական խմբինը՝ երկու տոկոսով:

Ստուգման խմբի ցույց տված արդյունքները փաստում են, որ նրանց հետ ժամանակակից ինտերակտիվ մեթոդներով և ինտերակտիվ ռազմավարություններով չեն աշխատում: Նրանք հաջողություններ են գրանցում ընկալողական վարժություններ կատարելիս, սակայն արտադրողական մակարդակում նրանց արդյունքները զիջում են իրենց համակուրսեցիներից, ում մոտ ձևավորվել են ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով աշխատելու կարողություններ:

Հետազոտությունն ավարտվում է 10 կետից բաղկացած եզրակացություններով, որոնք ատենախոսության առաջադիր խնդիրներից բխող հիմնավորումներն են:

Օգտագործած գրականության ցանկում ներառված է 152 աղբյուր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով, առկա են համացանցային աղբյուրներ ևս: Հավելվածն առանձնահատուկ ուշադրության արժանի աշխատանք է, որին հղումներ կան աշխատանքի տարբեր հատվածներում:

Աննա Եղյանի «Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» վերաառությամբ ատենախոսությունն ունի կոտ կառուցվածք, աշխատանքի գլուխների և ենթագլուխների միջև տրամաբանական հաջորդականությունն ապահովված է: Հիմնախնդրի կարևորությունը մեկնաբանված է բազմակողմանիորեն, կան անհրաժեշտ եզրակացություններ, վերլուծություններ հիմնախնդիրը լուծելու համար:

Այնուամենայնիվ Աննա Եղյանի ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ակնկալիքով նշվել են որոշ նկատառումներ և կատարվել առաջարկություններ:

1. Ատենախոսությունը բաղկացած է երկու գլխից, կարծում ենք առանձին գլխով կարելի էր ներկայացնել 2.3 կետը, որը վերաբերում էր անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման կադապարի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորմանը:
2. Առաջին գլխի երկրորդ ենթավերնագրում, այն է՝ «Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ընտրության սկզբունքները տեխնիկական բուհում», ինչպես նաև երկրորդ գլխի վերնագրում «Մասնագիտական

կողմնորոշման բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում», կարծում ենք առավել դիսուկ կլինեն, եթե գրվեր «մասնագիտական բառապաշար» արտահայտությունը: Քանի որ բուհերում տրվում է մասնագիտական կրթություն, ապա «մասնագիտական կողմնորոշում» արտահայտությունը կարծում ենք տեղին չէ, և այն ցանկալի է փոխարինել «ճարտարապետական» բառով կամ ենթազույգներից պետք է հանել «կողմնորոշում» բառը, գրելով՝ ճարտարապետական բառապաշար, մասնագիտական բառապաշար:

3. Երկրորդ գլխի վերնագրում կարիք կա թեմայի վերնագրին համապատասխանեցնելով որոշակի վերաձևակերպում անել: Գլխի վերնագիրն է. «Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում», ցանկալի կլինեն ձևակերպել հետևյալ կերպ՝ «Անգլերեն ճարտարագիտական բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում»:
4. «Մասնագիտական կողմնորոշման տեքստերի ընտրության սկզբունքները տեխնիկական բուհում» 1.1 ենթագլխի վերջում լավ կլինեն հեղինակն ամփոփեր հիմնական սկզբունքները ներկայացնող գծապատկերով՝ ասելիքն ավելի կոնկրետացնելու և առավել համընդգրկուն դարձնելու համար:
5. Այս կամ այն բառիմաստն արտահայտելու համար նախընտրելի է ամբողջ աշխատանքում կիրառել միևնույն եզրույթը /օրինակ, օգտագործել առօրյա-խոսակցական և բացառել ամենօրյա-խոսակցական բառակապակցությունը, կամ օգտագործել եզրույթ և բացառել տերմին բառը /:
6. Ատենախոսը կիրառում է լատինատառ LSP, ESP հապավումները, որոնց հայերեն տարբերակի կիրառության նախադեպ արդեն գոյություն ունի / ՀՆԼ՝ Հատուկ Նպատակների Լեզու, ԱՀՆ՝ Անգլերեն Հատուկ Նպատակների համար/:
7. Քանի որ աշխատանքի թիրախային հարցերից կարևորագույնը վերաբերում է հենց տերմինների ուսումնասիրությանը, կարծում ենք, որ առավել

արդյունավետ կլինեն մեկնաբանել նաև Վ.Վինոգրադովի, Օ.Ախմանովայի և ուրիշ այլ լեզվաբանների այն ուսումնասիրությունները, որոնցում հեղինակներն անդրադառնում են գիտական բառապաշարի դասակարգմանը՝ բաժանելով այն երեք շերտի: Գիտական բառապաշարի երեք շերտերի մոդելը /1.ընդհանուր բառապաշար, 2.ընդհանուր գիտական բարապաշար, 3.տերմիններ և տերմինակապակցություններ/ հատկապես մշակվել է գիտական բառապաշարի առանձնահատկությունները ցույց տալու համար:

8. Ատենախոսն իրավացիորեն նկատում է, որ ապագա ճարտարապետը կարիք ունի տիրապետել ոչ միայն մասնագիտական տերմիններին, այլև առօրյա-խոսակցական բառապաշարին և հետևապես, այդ առումով նույնպես գիտական բառապաշարի վերոհիշյալ դասակարգման մոդելը կարող էր նպաստել ճարտարապետական ենթալեզվի բարապաշարի ուսուցման գործընթացին:
9. Ճարտարապետական ենթալեզվի բառապաշարի ուսուցման առումով կարելի էր անդրադառնալ նաև դետերմինացիայի երևույթին, քանի որ տվյալ ենթալեզվի բառապաշարում քիչ չեն այնպիսի օրինակները, երբ միևնույն լեզվական միավորը հանդես է գալիս և՛ որպես չեզոք միավոր /օրինակ, առօրյա-խոսակցական խոսքում/, և՛ որպես տերմին, որն ուսանողը կարող է տարբերակել՝ ելնելով տերմինային համատեքստից, որտեղ տվյալ բառն արդեն ձեռք է բերում մասնագիտացված իմաստ /օրինակ, directedness, flow, symmetry, ballance, circulation/:
10. Աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ, որոշ անհարթ լեզվաոճական ձևակերպումներ են:

Սակայն մեր նկատառումները չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը:
Աննա Գազիկի Եղյանի «Անգլերեն ճարտարապետական բառայաշարի ուսուցման
մեթոդական համակարգը» խորագրով թեկնածուական ատենախոսությունը կոտ.
ամբողջական աշխատանք է և համապատասխանում է ՀՀ գիտական
աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝
Աննա Գազիկի Եղյանն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների
թեկնածուի /ԺԳ. 00. 02 թվանիշով / գիտական աստիճանին:

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ՝  Ա.Տ. Կնյազյան
բան.գիտ.դոկտ., պրոֆեսոր

Մանկավարժության ամբիոնի վարիչ՝  Ն.Կ. Հարությունյան
մանկ.գիտ.դոկտ. պրոֆեսոր

Հաստատում եմ պրոֆեսորներ Ա.Տ. Կնյազյանի և Ն.Կ. Հարությունյանի
ստորագրությունները
ԵՊՀ գիտական քարտուղար
Բ.Գ.Թ. ղոցենյան



Ս.Վ. Հովհաննիսյան

17.04. 2025թ.